

Գ. ԻԼՅԻՆ

# ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԼԱԳՈԴԱՆ

(Հայրենասերների ընտանիք)



891.71

Ի-36

ՊԵՏԶՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1989

25 SEP 2006  
19 NOV 2010

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ԾԻԱՅՈՒՄ

891.71

h-36

Գ. ԻԼՅԻՆ

# ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԼԱԳՈՒԴԱՆ

(Հայրենասերների ընտանիք)

2055  
P2

ԳԵՏՀԲԱՏ  
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՂԱՆ ● 1939

Д. ИЛЬИН  
ПОГРАНИЧНИК  
ЛАГОДА  
(Семья патриотов)

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939



3366  
39

Թարգմանեց Ավ. Զաֆարյան  
Խմբագիր Ա. Մավսիսյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Վ. Զիդեշյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր № Կ—2490, հրատ. № 702,  
Պատվեր № 116, արժ. 4.000, թղթի չափը 82×110<sup>1/32</sup>  
(32-550 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 2 տպ. մամուլ, 1 թերթ թուղթ  
Հանձնված է արտադրության 16/VI 1939 թ.  
Ստորագրված է տպագրելու 11/VII 1939 թ.  
Գինը 50 Լ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,  
Յերևան, Ալլահվերդյան № 65

## I

Մերձվորդյան ձյունածածկ դյուղակին աղջամուղջի մեջ  
եր: Ձյունապատ բլուրներից ձեռնասահակներով խիզախ ու  
կայտառ սահում եյին յերեսաները: Իսակլիի մեքենա-  
տրակտորային կայանի ագարակում կանաչը սեղան եյին  
պատրաստում, ամուսիններին ճաշի եյին սպասում: Արհես-  
տանոցներում փոփոխվում եյին հերթափոխները: Դեպի  
կոկլիկ սպիտակ տնակն եր քայլում ծերունի վականագործ  
Լադոդան: Այսոր նա բարձր տրամադրություն մեջ է: Փյո-  
դոր Արրոսիմովիչն իրեն պատկերացնում եր, թե ինչպես  
կուրախանա իր ավագ վորդի Սեմյոնը—հեռավոր—արևե-  
լայն գործասերից մեկի սնայտերը, յերբ նա հեռագիր  
ստանա իր աղջկա ծննդյան մասին:

— Դեմադեղատուն, սոսկա (ծծակ) զնեմ, նվեր տամ  
թոռնիկիս,—վորդեց ծերունի:

Հասնելով առաջին նրբափողոցը, Լադոդան շուռ յեկավ  
դեպի աջ: Նա հագնվ նկատեց, վոր փողոցով սրարչավ ան-  
ցավ մի ձխավոր: Ի՞նչ ուշագրավ բան կար այդ ձխավորի  
մեջ. քի՞չ եր տեսել դրանց իր կյանքում Փյոդոր Արրոսիմո-  
վիչը: Չգուշակեց ծերունի սիրտը, թե այդ սուրհանգակն  
ի՞նչ ողոկալի ետափետ բերեց կայծակի արագությամբ իր  
սուներ:

## II

Հեռավոր—արևելյան սահմաններն անթափանցելի մառա-  
խուղ եր պատել: Սպիրտի ջերմաչափը ցերեկը ցույց եր  
տալիս քառասուն հինգ աստիճան սառնամանիք: Ու ամ-

ընթացում չընկնող ապրում էր իր սովորական չափած-ձևած կյանքով: Մարտիկները գնում էին դեպքի: Ուղեկցողները (проводники) հակազդեր հազած ման գալու արվեստն էին սովորեցնում սպասարկող չնեբին—անքմահաճ գամփո- նեբին և քնքույշ դոբեման—պինչեբնեբին, վորոնց թաթեբին հազցրել էին կաշվե փոքրիկ տուֆլիներ և մեջքներին բան- տրեկաձև կապել էին ժապավեններ: Շարքային պարապ- մունքներ էին տեղի ունենում: Ինչ—վոր մի տեղ՝ ամպերից մերե շատաչում էին «բազեիկները» եկակաղրիկները—այդ- պիսի փաղաքական բառով էին կոչում Հեռավոր Արևել- քում այն արագաթուխ կործանիչները, վորոնք ունեն կարճ, ասես թե կտրած իրան—Ֆյուզելաժ և մոտոր: Տրանսպցիոն ցանցի ընդունիչների ու հաղորդիչների մոտ աշխատում էին ռադիոստները: Հրամանատարների կանայք զարդաբրում էին ճաշարանը:

Իրենց վրա գցելով քողարկման սպիտակ վերնազգեստը (բալախոն)՝ զազանների արահետի մոտ սեկրետում պառկե- ցին—դարան մտան յերկու կարմիր—բանակայիններ—մեկն զեկրախնացի, մյուսը՝ վոլգարնակ: Շուտով նրանք դաշտա- յին հեռախոսով կանչեցին շտաբի հերթապահին. ժամի 13 անց 5 րոպե՝ այն կողմից սահմանի վրայով փախավ վայրի խոզերի մի յերամակ, թվով մինչև տասը հատ: 18 րոպե անց շտաբն ստացավ ելի մի գեկույց—սահմանը խախտեցին յերկու գայլեր: Նրանք փախան մանջուրական կողմից և ուղղվեցին դեպի տայգայի խորքը: Նապաստակներն ել ալկվեցին:

— Ինչի՞ց այդպես դես ու դեն փախան զազանները,— քարձրաձայն մտածեց շտաբի պետը: Յերկոտանի գիշատիչ- ներն են ժաժ յեկել անտառներում:

Յերեք որ առաջ այստեղ անկոչ հյուրեր յերեացին: Ուրիշի տերիտորիայի սիրահար յապոնացիները հարձակվե- ցին խորհրդային սահմանապահների վրա, վորտեղ դրին մեր հողի վրա: Այդ բանը թանդ նստեց սամուրայներին: Զիշտ է, ժամանակ չլինելու պատճառով նրանք չպատուեցին իրենց

փորերը, ինչպես այդ Թեյադրում և յապոնական «սուդա- տական վոդին»: Բանը շատ հասարակ կերպով վերջացավ: Ժամանակակից սամուրայները—սակավահարգարժան գեներալ Արակիի հետևորդները—պարզապես ցած գցեցին հրացան- ները, շինեցները, կորցրին կոշիկները—ամբողջ թափով փա- խան իրենց յերկիրը: Ել ինչ կարելի յեր այդտեղ մտածե- ր անվեհեր «սուդատական վոդու» մասին...

Միավորության հրամանատարը կարգաց հենց նույն ամփոփազիրը—ժամի 13 անց 5 րոպե սահմանակից կողմից մեր տերիտորիան փախան վայրի խոզեր: Ժամի 13 անց 23 րոպե հենց նույն կողմից փախան գայլեր... Գնդապետն ուշադրությունը լարեց. կա, չկա՝ տայգայում թափառում են հին ծանոթները:

Նորից հարցուիորձ արին ժամապահներին: Ամեն ինչ լուռ էր... Յեվ զազաններն այլևս չեն փախչում: Մառա- խուղն ալկելի խտանում է: Զերմաչափի՝ սպիրտի բարակ սյունիկն ել ալկելի ցած իջավ: Գիշերն իր թևերը տարա- ծում է: Վոչ մի ձայն: Կարծես ամեն ինչ կաշկանդել և սառ- նամանիքը: Խարուսիկ չէ՞ արդյոք այս լուռթյունը... Ո՛վ գիտի:



Մոսկվայում նույն ժամին վառվեցին առաջին լույսերը: Զյուն էր գալիս: Կարմիր հրապարակով, դեպի Կրեմլ, մեծ պալատ էին շտապում ժողովրդի պատգամաբերները.— Գրիդնեպրովեցի տունդրայից ու տափաստաններից, Զորու- չի ափերից ու Թուրքմենիայի ալաղուտից, Տաջիկստանի լեռնահովիտների ու Սիրիի անտառների բնակիչները, Ուբա- լի մեռաղագործները և Ղազախստանի անասնապահները, Կովկասի լեռնականներն ու Դոնբասի հանքափորները, ուստու- րիական տայգաների, ստանիցաների ու ջրառատ Դոնի ափերի իրազակ—կոլտնտեսականները, Բալթիկի ծովայինները և Գրի- մորյեյի տանկիստները: 1936 թվի նոյեմբերի 25-ի որն էր: Յերեկոյան ժամի 5-ին Խորհուրդների Արտակարգ VIII հա-

մադուամարի ամբիոնը բարձրացավ Ստալինը: Ամբողջ աշխարհի ռադիո-ընդունիչները յեթերի մեջ աղահաբար վորսում ելին գեկուցման յուրաքանչյուր բառը ազատութեան մեծ խարտիայի մասին, սոցիալիզմի յերկրի նոր Սահմանադրութեան մասին:



Կարմիր-բանակային Սեմյոն Լազոդան հենց նոր վերադարձավ վերակարգից: Նա արագ կերպով անցավ լենինյան անկյունը, ձեռքը վերցրեց ականջակալները, մի քիչ ավելի հարմար նստելով բաղկաթոռին, սկսեց աղահաբար լսել: Ահա վորոտաց ամպ: Վոչ, դա ավելի շուտ նման էր ծովի շառաչման—համադրումարը ծափահարում էր հարազատ Ստալինի խոսքերին: «Մեր Խորհրդային հասարակութունը հասավ այն բանին, վոր արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ վոր մարքսիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առաջին կամ ստորին փուլ...»:

Բայց Լազոդային չհաջողվեց յերկար լսել ռադիոհաղորդումը Մոսկվայից...

Բանդիտները, այսինքն Կվանտոնյան բանակի սամուրայները, գինավորներին խորհրդային սահմանների վրա գիշերային հարձակման տարան: Ո... ամբացված չըջանում հնչեց մարտական տաղնապը: Սնայպեր Սեմյոն Լազոդան մի ակնթարթում տաշանկայի վրա դրեց զնդացիրը և սլացավ դեպի սահմանի վրա ծառացած վայրի բլուրները: Այնտեղ ամբացել էր թշնամին: Մարը խիստ զառիվայր էր: Տաշանկայով առաջ շարժվել, բարձրանալ անհնարին էր: Սեմյոնը վեր առավ զնդացիրը, դրեց մեջքին և մաղցեց դեպի վեր: Յերկու հարյուր մետր անցնելուց հետո քաջարին կանգ առավ: Մի քանի ակնթարթ—և «մաքսիմը» թխթխկոցն սկսեց: Լազոդայի արագաշարժ ձեռքերում զնդացիրը հրաչենք էր գործում: Շնագայլերի նման վախկոտ յապոն-մանջուրական գինավորները հերոսի վրա գրոհեցին մի ամբողջ դա-

սակով: Հարձակվողները զնդացիրները նրա վրա կենտրոնացրին իրենց ամբողջ կրակը: Սեմյոնին սրաշտաանող գերանները փչուր-փչուր ելին յեղել: Վեց զնդակ ծակել-անցել էր վահանը—յերեքն ընկել էր դլանակի մեջ, յերկուսը ծակծակել էր պատյանը: Բայց Լազոդան մնում էր իր պոստում, մինչև վոր թշնամու զնդակը նրան շարքից հանեց:

Մի ձեռքով սեղմելով վերքը, վորից առվի նման հոսում էր արյունը, Սեմյոն Լազոդան շարունակում էր հնձել սամուրայներին իր «մաքսիմի» դիպուկ կրակով: Ձեռքը մի քիչ դողում էր, բայց սնայպերի աչքը հավատարիմ էր: Յեկավ հերթափոխը: Ընկերներն իրենց ողնությունն առաջարկեցին նրան, ուզում էին կրակից դուրս բերել նրան: Լազոդան հրաժարվեց և միայն խնդրեց, վորպեսզի վորևէ մեկը նրա տեղը բռնի զնդացրի մոտ, իսկ ինքը սողալով հեռացավ փոքր ինչ մի կողմի վրա:

Սամուրայները նեղում էին: Նրանք, առնվազն, հինգ անգամ ավելի էին, քան թե խորհրդային հողի անվեհեր պաշտպանները: Ստամները սեղմելով, գերմարդկային ճիգեր դործադրելով, մի ակնթարթում Սեմյոնը բարձրացավ, նռնակը նետեց յապոնացիներին վրա և անդադ գլորվեց դետին: Անցավ մի քանի րոպե: Սեմյոնը ուշքի յեկավ: Առանց վորևէ տնքոցի սկսեց սողալ դեպի հետ, դեպի թիկունք: Նրա ականջին հասավ հարյուրավոր կոկորդներից դուրս պրծած «ուռա»-յի ձայնը:

—Մերոնք դրոհ տվին—անսխալ կերպով մտածեց Սեմյոնը:

Շատ ուրեր պայքարեց յերիտասարդ և ուժեղ որդանիգմը մահվան դեմ: Տայդայի վրայով ինքնաթիռներով դեպի հերոսի անկողինն էին շտապում Խաբարովսկի և Վլադիվոստոկի ամենահմուտ պրոֆեսորները: Նորից և նորից միջամտում էին վիրաբույժները, փորձելով փոխել հիվանդութեան ընթացքը, կանգնեցնել, դադարեցնել քայքայիչ ընթացքը: Չորս անգամ արյան փոխներարկում արին: Սեմյոնը յերբեմն ուշքի յեր գալիս: Նա հարցնում էր մարտի վախ-

ճանի մասին, պահանջում եր պատմել բոլոր մանրամասնությունները, ուրախանում եր, վոր սամուրայները ջախջախվեցին: Խնդրում եր իր մասին չանհանգստանալ: Շարունակ հարցնում եր՝ նամակ չկա՞ կնոջից—նա պետք ե յերեխաբերի:

Միջանի անգամ Մոսկվայից հարցրին—ինչպե՞ս ե Լապոզայի խողովությունը, չե՞նք կարող արդյոք վորեւ բանով ոգնել:

Նրա անկողնու մոտ անբաժան կերպով հերթապահում եյին հրամանատարների կանայք: Հեռավոր—արեւելյան Կարմրագրոշ Հատուկ Բանակը, Սաղաղովկիանոսյան նավատորմը, Ամուրի Կարմրագրոշ նավատորմիւր, Սաբարովսկի բանվորները, պատանեկության քաղաքի—Կոմսոմոլսկի կառուցողները, Սուչանի հանքավորները, Վլադիվոստոկի տնտեսուհիները, Բիրոբիժնանի հրեա կոլտնտեսականներն իրենց դելեգացիաներն եյին ուղարկում վերջավոր հերոսին ալցելու, Նրա ձեռքը սեղմելու: Հիվանդանոցի վրայով թռչելով, ողաչուէները հաղորդում եյին իրենց ազգանշանները և պահանջում եյին ռադիոյով հաղորդել, թե ինչպե՞ս ե նա իրեն զգում: Հրամանատարները և կոմիսարները ստանում եյին տասնյակ զեկուցադրեր: Միանգամայն անձանութ մարդիկ, Սեմյոնին յերբեք աչքով չտեսած, առաջարկում եյին իրենց ոգնությունը:

—Ընկեր Լազոզան շատ արյուն ե կորցրել, յես ուրախությամբ նրան կտամ իմ արյունը, ինչքան վոր հարկավոր ե...

Դեկտեմբերի կեսին Մոսկվայից կառավարական հաղորդադրություն ընդունվեց հայրենիքի անսահման քաջ հայրենասեր Սեմյոն Լազոզային մարտական Կարմիր Դրոշի Շքանշանով սրարգևատրելու մասին: Սեմյոնը անզղա պառկած եր, վոչ վոքի չեր ճանաչում:

Անցավ ելի մի օր: Պրոֆեսորը տխուր առաջ.

—Բժշկությունից վերցրինք այն ամենն, ինչով միայն նա հարուստ ե այսօր: Բայց մահը հաղթեց...

Հեռավոր Արեւելքը սգազգեստ եր հաղել: Յերկրամասը թաղում եր Լազոզային: Դազաղը դրված եր Սպասսկի Կարմիր Բանակի տանը: Հերոսին հրաժեշտ տալու եյին զաւիտ տանյակ—հազարավոր մարդիկ: Սեմյոնի աճյունը հողին հանձնեցին քաղաքի կենտրոնական հրապարակում: Կողքին գտնվող՝ Սպասսկի առասպելական պարտիզանների յեղբայրական դերեղմանը լուռ ու մունջ հիշեցնում եր «Սպասսկի դրոհային դիշերները», բետոնով շղթայած սամուրայական բաւտիոնների անկումը, յապոնացիների ջախջախումը 1922 թվին:

### III

Փյոդոր Արքուսիմովիչն ուժգին թափով լայն բացեց իր բնակարանի դուռը: Շեմքն անցավ—և սառեց տեղում: Լաւիս եր Սեմյոնի պառավ մայրը, մօրմօրվում եր նրա կիներ: Նրա վորդի Իվանը հօրը մեկնեց ՀԱԿՀԲ-ի շտաբից ստացված հեռագիրը:

Նոյեմբերի 26-ին խորհրդային հողը ներխուժած յաւտոն—մանջուրական ավանտյուրիստների դեմ մղած մարտում ծանր վիրավորվեց ձեր վորդի Սեմյոն Փյոդորովիչը: Դեկտեմբերի 19-ին նա վախճանվեց: Պատերազմի հրձիգները յերջանիկ կյանքի ակտիվ կառուցողների շարքերից խլեցին ևս մի գոհ: Ընկավ հիանալի մարտիկ—դնդաքորոդը, կարմիր բանակայինների ընդհանուրի սիրելին: Սոցիալիստական հայրենիքը լիտի հարձակվողներից պաշտպանելիս նա մարտում իրեն պահեց վորպէս խակական հերոս, վորպէս խորհրդային ժողովրդի հավատարիմ զավակ: Ձեզ հետ միասին Հեռավոր Արեւելյան Կարմրագրոշ Հատուկ Բանակը վշտացած ե ծանր կորուստի առթիւ և խորին ցավակցություն ե հայտնում ձեզ, բոլոր համազուղացիներիդ ու հարազատներիդ:

Ծանր եր կորուստը... Միտթարություն եր միայն մի բան. Սեմյոնն ընկավ մարտական պոստում, մայր հայրենիքի սրբազան հողը պաշտպանելիս:

Խորը վշտի յերեկո յեր: Սաստիկ տրամության մեջ եր

ընտանիքն իր սիրելի Սեմյոնի համար: Ֆյոդոր Արքուիմո-  
վիչը ձեռքը վերցրեց թոռնիկին և շարունակ նրան ուշա-  
գրությամբ նայում էր, նրա փոքրիկ դեմքի վրա փնտռում  
էր Սեմյոնի հարազատ գծերը: Այսպես, թոռնիկին իր ձեռ-  
քերի վրա առած նա յերկար քայլեց անկյունից անկյուն...

Լույսը բացվելուն պես հայրը և նրա վորդի Իվանը սե-  
ղանի շուրջն եյին: Գլուխները ցածր խոնարհած, դանդաղո-  
րեն ամեն բառը յերկար ու խորը մտածելով, նրանք զրեցին  
ՀԱՅՆԻ-ի շտաբին: Հաղթահարելով վշտի սուր ցավը, վառ-  
ված դեպի թշնամին տածած վրեժխնդրության կրակով,  
հայր և վորդի խնդրում եյին՝ Իվանին թույլատրել զբաղե-  
լու սպանված յեղբոր տեղը: Վերջում կարճառոտ ասված  
էր. Իվանը կոմյերիտական և, ստախանովաբար և վարում  
տրակտորը և կոմբայնը:

Տեղական տպարանի հերթապահությունից յեկավ մյուս  
յեղբայրը, 17-ամյա Դմիտրին: Նա վճռականորեն պահան-  
ջում էր, վորպեսզի հեռագրի մեջ մտցնեյին մի եյական  
ուղղում. Հեռավոր-Արևելյան Կարմրադրոշ Հատուկ Բանա-  
կի շարքերն են ուղում վորպես կամավորներ մտնել զոհված  
հերոսի յերկու յեղբայրները—Իվանը և Դմիտրին:

Մոր սրտովն արյուն է զնում իր ավագ վորդի Սեմյոնի  
մահվան վշտից: Մայրն ինչ-վոր միանգամից նիհարեց:  
Աչքերը խորն ընկան: Արդյոք նա այլևս կգիմանա՞ Իվանի  
և դեռահաս Դմիտրիի մոտալուտ հրաժեշտին: Մայրը մոտ  
կանչեց վորդիներին, նստեցրեց իր մոտ՝ նստարանի վրա:  
Նրա ձայնը մի քիչ դողում էր:

—Որհնում եմ, յերեսաներ, զնացեք սահմանի վրա,  
վրեժ լուծեք Սեմյոնի համար: Պահպանեցե՛ք, պաշտպանե-  
ցե՛ք խորհրդային հողը: Մերն է նա, մեր հարազատը: Իսկ  
վոր յես լալիս եմ, այդ վոչինչ...



Պատասխանը յեկավ նոր տարու նախորդակին: Պաշտ-  
պանության ժողովում ընկ. Վորոշիլովը հրամայել էր բավա-

բարել Իվանի խնդիրը: Այլ կերպ էր պատանի Դմիտրիի բա-  
նը: Խորհրդային Միության առաջին մարշալը զրել էր, վոր  
նա բարձր և զնահատում Դմիտրիի հայրենասիրական զգաց-  
մունքները, չի կասկածում, վոր պատանին արժանի կլինի  
իր հերոս-յեղբորը, սակայն խնդրում է մի քիչ սպասել:  
Դոնե մինչև այն ժամանակ, յերբ Դմիտրիի 18 տարին  
կլրանա:

Վայրկենապես ոկրուգում լուրը տարածվեց, վոր  
Իվան Լազոգան ընդունվել է ՀԱՅՆԻ-ի շարքերը: Վոլգայի  
ափերին տարածվում էր միտինգների ալիքը: Ժողովուրդը  
վողջունում էր մորն ու հորը, վորոնք այդպիսի վորդիներ  
են դաստիարակել: Ժողովուրդն իր յերախտագիտության  
զգացմունքներն էր հայտնում Իվանին ու Դմիտրիին՝ կար-  
միր-բանակային շարքում զոհված Սեմյոնին փոխարինելու  
նրանց անսահման կամքի համար: Տասնյակ և հարյուրավոր  
յերիտասարդ խորհրդային հայրենասերներ հայտնում եյին,  
վոր իրենք ցանկություն ունեն սամուրայների կողմից  
սպանված հայրենակցի տեղն անցնելու:

Աշակերտակա՞ն տետալի փոքրիկ թերթի վրա Բուլե-  
Վյաստի շրջանի Տեպլովկա գյուղի կոլտնտեսական Կոստի-  
նը գրում է Պրիմովսկեյի զինվորական ոկրուգի՝ շտաբին.

«Յես խնդրում եմ ձեզ և դեռ միջանի հազար անգամ  
խնդրում եմ միջնորդություն հարուցել ընկ. Վորոշիլովի  
առաջ՝ Հեռավոր-Արևելյան բանակի շարքերն ինձ ժամկետից  
առաջ ընդունելու մասին: Յերբ ժամը հնչի, յես, ինչպես  
Սեմյոն Լազոգան, կկռվեմ մինչև իմ վերջին կաթիլ ար-  
յունը: Յես յերկու դիմում եմ ավել Պենզայի ռազմական  
կոմիտարիատին: Իմ հայրն անձամբ զնացել է Պենզա տեղե-  
կանալու: Նա իր կողմից զրել է, վոր պաշտպանում է իմ  
ցանկությունը, բայց միայն զրական պատասխան դեռես չի  
ստացված»:

Անտառոտ Մորզովիայից փոստային աշխատակից Լապ-  
չինը գրում էր.

«Յես մեծ դայրույթով իմացա հերոսի, մեր վոլգացի  
Սեմյոն Լազոգայի սպանվելու մասին: Յես միանգամից

անհրաժեշտութիւնն զգացի հեռավոր-արեւելյան քաջարի սահմանապահներ շարքերը մտնելու: Այնտեղ և իմ տեղը: Ծնել էմ 1918 թվին՝ չքավոր դյուղացու ընտանիքում: Յես յերգվում եմ ամբողջ խորհրդային ժողովրդին, վոր կըրծ-քովս կտաշտպանեմ ծագելող յերկրի սահմանների անձեռն-մխելութիւնը»:

Կինէլ-Ձերկաստի շրջանային դյուղի միտնելում կար-դացվեց հինգ պատանիների կարճատու հայտարարութիւնը.

«Մենք ցանկանում ենք մեկնել այն մարտական պոստը, յորը թողնված է մեր ընկերներ Սեմյոն Լաղուլայի ու Մի-խայիլ Դոլգուլովի հերոսական մահւման պատճառով: Վո-րի համար և ստորագրում ենք՝ Բուզակով Միխայիլ—№13 արադացի փականագործ, Գոլեմ Նիկոլայ—Տուկայ կայա-րանի բեռնակիր, Մաիլլայեմ Յակով—տրակտորիստ, Չոր-նիկ Միխայիլ—տրակտորիստ, Պանկրատով Անդրեյ—կու-տնտեսական: Բոլորս դրագետ ենք, բոլորս առողջ ենք...»:

Ձերմ սիրո թելերն ամուր կերպով կապել են կոլտնտե-սային դյուղը սահմանային պոստերի հետ: Յեղբայրը յեղբոր համար, ընկերն ընկերով համար, դյուղը համադյուղացու համար—այդ է դարձել խորհրդային հայրենասերների պան-ծալի, անխախտ տրագիցիան:

Կանաչադարդ և լուռ ոռոսական հին փոքրիկ քաղաք Չագորսկում ապրում է Ֆիրսովների բանվորական ընտա-նիքը: Վորդի Պավելը ծառայում եր Խաբարովսկում վոր-պես կրտսեր հրամանատար: 1938 թվի դարնանը յապոնա-կան հետախուզութեան տրոցկիստական-բուխարինյան վարձ-կաններն իրենց ձեռքերը ներկեցին այդ հիւսնայի մարդու արյունով:

Հայրը—Պյոտր Ալեքսեյիչ Ֆիրսովը և կրտսեր վորդի Անատոլին գրեցին ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի իրենց դե-պուտատ—ԲԳԿԻ-ի պլնավոր շտաբի պետ ընկ. Շապոլնիկո-վին.

«Մենք, մեր հիւսնայի հայրենիքի հայրենասերներս, միջ-նորդում ենք Ձեր առաջ և խնդրում ենք Ձեզ՝ զեկուցել

պաշտպանութեան ժողովրդական կոմիտար ընկ. Վորոշիլովին մեր խնդրը, այն է՝ զոհված Պ. Պ. Ֆիրսովի տեղը ԲԳԿԻ-ի շարքերն ընդունել, հենց նույն զորամասում, նրա յեղբորը Անատոլին—«30М3» գործարանի ճախարակագործին, 1919 թ. ծնված: Իմ վորդի Անատոլի Պետրովիչը աղնվորեն, խորհրդային, բոլշևիկյան բուռն խանդավառութեամբ կծառայի աշխատավոր ժողովրդին»:

Ընկ. Վորոշիլովը, նամակը կարդալուն պես, անմիջա-պես կարգադրութիւնն արեց—.

«Ֆիրսովների, իսկական խորհրդային հայրենասերների միջնորդութիւնը, բավարարել: Ընկ. Ա. Պ. Ֆիրսովին ըն-դունել վորպես ԲԳԿԻ-ի կարմիր-բանակային և ուղարկել այն զորամասը, վորտեղ ծառայել է հանգուցյալ Պ. Պ. Ֆիրսովը: Ընկ. Պյոտր Ալեքսեյիչ Ֆիրսովին ու նրա ամ-բողջ ընտանիքին հաղորդեք շնորհակալութիւն և կարմիր-բանակային վողջույն ամբողջ Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակի անունից: Կ. Վորոշիլով, 31. V-38 թ.»:

Ոգեսայի մարզի Կարլ-Լիբկնեխտի շրջանի «Ուրոնա» արտելի ուկրայնական կոլտնտեսական Շատուխի վորդին, ԲԳԿԻ-ի հրամանատարը սպանվեց մարտական պոստում: Ծերուկը խնդրում է բանակ ընդունել յերկրորդ վորդուն՝ Վասիլին.

«Ինձ համար չափազանց ծանր է սիրելի վորդուս կո-րուստը: Բայց այժմ, յես մի միտք ունեմ—Միխայիլին հեր-թափոխող մի մարտիկ տալ Կարմիր Բանակին: Մենք վոչ մի բանի առաջ չպետք է կանգ առնենք, յեթե գործը վերա-բերում է մեր հայրենիքի ամրացմանը, մեր սոցիալիստա-կան հայրենիքի ամրացմանը»:

Դոնբասում՝ Ստալինի անվան հանճահորում աշխատող ստախանովական Նիկոլայ Դուրնեւն այնտեղ բերեց իր կրտս-սեր յեղբայր Ալեքսեյին և նրան հանձնեց հետահար մուրճը:

—Դու, Լյոչա, աշխատիր այստեղ, քարածուխ հանիր, իսկ յես գնում եմ Հեռավոր Արեւելք, ուղեկալում կփոխա-

րինեմ մեր ավագ յեղբորը, վորը խոցվել է հաբձակվող յապոնացիների գնդակներից:

Պրիմորյեյի անվեհեր վորդուն բանակի շարքերը ընդունել տալու մասին աշխատում եր նաև նրա մայրը—Ալբրիլինա Դմիտրիևնան: Խորհրդային սովորական մի կին:

Ուֆայում պրոֆեսոր—վիրաբույժին գիմեց յերիտասարդ յերկաթուղային Վասիլի Բեմիկինը: Նա աղերսում եր իրեն ոգնել մեծ դժբախտության մեջ:

—Յես հատկապես յեկել եմ Դեմա կայարանից: Ինձ բանակ չեն վերցնում: Ասում են՝ մեծացել է վահանաձև գեղձը, ուռուցքը չափից դուրս աճել է: Ի՞նչ անել: Յես լսել եմ, իբր այդ ուռուցքը կարելի յե կտրել: Խնդրում եմ, պրոֆեսոր... Դուք, հավանորեն, լսել եք Լազոդա յեղբայրների մասին...

Վիրաբույժը պատասխանեց.

— Այո՛, ուռուցքը կարելի յե կտրել: Վիրահատությունը կյանքի համար վտանգավոր չէ, բայց խիստ ցավազին կլինի: Մտածեցեք, սիրելիս:

Պատանին ծայրահեղ անհամբերություն եր ցուցաբերում: Հետևյալ օրն առավոտյան նա պառկեց վիրահատման սեղանի վրա: Վիրահատությունը հաջող կատարվեց: Միքանի օրից հետո Վասիլի Բեմիկինը ուղղակի հիվանդանոցից սլացավ ռազմական կոմիսարիատ: Յերիտասարդ խորհրդային հայրենասերն ընդունվեց սահմանադրազորամասերից մեկը:

#### IV

Իվան Լազոդայի հետ միասին Հեռավոր Արևելք մեկնեց և հայրը: Դրան լուրջ պատճառ կար: Ծերունին հաստատ հավատում եր իր վորդուն, գիտեր, վոր նա կամքի տեր և խելամիտ մարդ է: Յեվ, այնուամենայնիվ, նա չեր կարող իրեն հանգիստ համարել, մինչև այն ժամանակ, քանի դեռ Իվանը չեր յերդվել Սեմյոնի գերեզմանի վրա, վոր արժանի կլինի իր յեղբորը, չի խայտառակի իրենց ընտանիքը:

Ուարժովսկում Ֆյոդոր Աբրոսիմովիչը և Իվանը յեղան Հեռավոր—արևելյան կարմրադրոշ Հատուկ Բանակի շտաբում: Տեղի ունեցավ մեծ և սրտազին խոսակցություն:

Հորը և վորդուն իրավացիորեն անվանեցին ուսական դյուցազներ: Վորդին հասակով և առողջությամբ հետ չի մնում հորից, իսկ հայրը հորը է:

Ֆյոդոր Աբրոսիմովիչը դրան պատասխանում եր.

— Ինչպես կեչին է, այնպես ել ընձյուղներն են:



Ուսադեմին բուքը դադարեց: Հանդստացան ծառերը տալալում: Սաստկացավ սառնամանիքը: Մոտակա բլուրների վրա ծառեց փետրվարյան աղոտ արևը: Ռուսական հողի առաջին կելոմետրերի վրա, Հեռավոր—արևելյան փոքրիկ քաղաքում ուղիղ քառանկյունիներով շարվեց գունդը: Անշարժ են մարտիկների շարքերը...

Շարքին մոտեցան յերկու նորեկներ: Նրանց պատում էյին անհամբերությամբ, ինչպես հին ու ջերմորեն սիրված բարեկամների: Կարևոր չէ, վոր մինչ այդ մարտիկները յերբեք նրանց չէյին տեսել, շատ բան եր նրանց հարադատեցնում, շատ բան եր նրանց կապում... Առաջինը գնում եր մեծ և թիկնավետ մի մարդ: Նրա լայն և խիստ դեմքը ափսոսել էյին խորը կնճիռներ, գլխարկի տակից դուրս եր պրծել ճերմակած մազափունջը, բայց աչքերը փայլում էյին ճիշտ ինչպես յերիտասարդի աչքեր: Նա խնամքով կրում եր հրացանը, վորի ազուստը ծակծկված եր գնդակներով: Անմիջապես նրա հետևից քայլում եր նույնպիսի հուժկու, հաղթանդամ կազմվածքով մի պատանի, վորը հագին ուներ վրան լավ նստող դաբադած կիսամուշտակ: Թե՛ արտաքինով, թե՛ հասակով, թե՛ իրենց վստահ քայլվածքով յերկուսը նման էյին մեկը մյուսին:

Հայրն ու վորդին:

Հայրը մոտեցավ հրամանատարին.

— Մարտիկների շարքերում չպետք է լինեն բացատներ:

Գիշատիչ և անառակ յապոնական սամուրայները զնդակները տարան իմ անջնեկին—Սեմյոն Լազոդային։ Նրա տեղը պետք է կանգնի իմ յերկրորդ վորդին—Իվանը։ Թույլ տվեք Իվանին շարք կանգնել։

Համաձայնություն ստանալով, հայրն ուղադրությամբ նայեց շարքերին։ Նրա վորդին բոլորից բոյով եր, և նա տարավ նրան դեպի աջ թևը։ Հետո վորդուն տվեց հրացանը։

— Վերցրո՛ւ, վորդյակ, քո հերոս յեղբոր հրացանը։ Նրանով կրակիր դիպուկ, հարվածի՛ր թշնամուն, անվրեպ, ինչպես այդ անում եր Սեմյոնը։ Թող քո սրտում ալեկոծվի ջերմ, յերբեք չսառչող սերը դեպի հարազատ հողը և սրբազան ատելություն դեպի յեղբորդ սպանողները։ Ամեն րանում նմանվիր քո յեղբորը։ Այդ կլինի ամենալավ սիփոնանքը, ամենամեծ ուրախությունը քո պառավ մոր համար, քո հոր համար։ Իսկ յեթե կարիք լինի—յես ևս կգամ և կտամ իմ արյունը, կաթիլ առ կաթիլ... Հիշիր, վորդյակս, վոր կյանքում լինում և և այսպես—մարդ մեռնում է, սակայն հաղթությունը նա տանում է։

★

Իվանը հոր և հայրենակիցներին դեկզացիայի հետ մեկնեցին սահմանը, այն զորամասը, վորտեղ ծառայել եր Սեմյոնը, այնտեղ, վորտեղ խորհրդային հողի վերջին շերտիկի վրա թափվել եր հերոսի արյունը։ Սահմանային սյուներն չհասած միջանի մետրի վրա բոլորը կանգ առան։ Առաջ գնալն այլևս վտանգավոր եր։ Գլխարկները վերցրին։ Ֆլորդոր Աբրոսիմովիչն աշխատում եր աննկատելիորեն թափ տալ արցունքը։ Ընդհանուր լուսթյունը խանգարեց Իվանը—նա խնդրեց իրեն ցույց տալ այն տեղը, վորտեղ վիրավորել էին Սեմյոնին։

— Դա վտանգավոր տեղ է,—առարկեց նրանց ուղեկցող լեյտենանտը, վորը նույնպես հայրենակից եր, վորդաբնակ։

— Միևնույն է, գնանք։

— Դե ինչ նայես, վորդյակս... —փորձեց Իվանին վանդնեցնել հայրը։

— Խնդրում եմ, գնանք, յես պետք է իմանամ այն տեղը,—իր ասածը պնդեց Իվանը։

Ուղեկալի պետը վերջվերջո գիշեց։ Իվանը և լեյտենանտը սողացին դեպի առաջ։ Անսպասելի կերպով լեյտենանտը ձեռք տվեց Իվանի ուսին. ահա այստեղ է։ Նա ցույց տվեց խանձված թուփը։ Իվանը ձեռքը մեկնեց, ինչ-վոր մի բանի համար շոշափեց այն թուփը, վորը ծառայել եր Սեմյոնին վորպես քողարկում, պոկեց միջանի տերև և դրեց դրպանը։

Ուղեկալում Իվանին տարան խնամքով սարքված մի մահիճի մոտ։

— Այստեղ եր քնում Սեմյոնը, այժմ դուք տեղավորվեցեք։

Տումբոչկայի վրա դեռևս բաց դրված մնացել եր Սեմյոնի կիսատ կարդացած գիրքը...

Հայրը և հայրենակիցները մեկնեցին։ Իվանն սկսեց պարապել գնդի դպրոցում, պատրաստվում եր կրտսեր հրամանատար դառնալու։ Շուտով նա ստացավ առաջին չնորհակալությունը գերագանց ուսման համար։

★

Անտառոտ հովտում, վորը շրջապատված եր կատարները ձյունապատ առամհավոր լեռների շղթայով, Իվան Լազոդան առաջին անգամ տեսավ տանկեր։ Այդ հանդիպման մասին, վոր այդպիսի դեր խաղաց նրա կյանքում, Իվանը դոհուհակությամբ է հիշում։

— Ինձ շատ դուր յեկան այդ մեքենաները։ Յես սկսեցի մի տանկ բոլոր կողմերից գննել, շոշափել, մտա ներսը։ Այստեղ ել հենց իմ մեջ միտք հղացավ—գառնալ տանկիստ։ Մեծ գործեր կարելի յե կատարել տանկով, միայն թե մարդ նրա հետ բարեկամանա։

Ամիսներ անցան։ Խոր ձորերում աղմկել սկսեցին գար-



նանային սրբնթաց հեղեղները: Բլուրներն սկսեցին կանաչել: Տայգայում զարթնեց զարնանային կյանքը: Լազոդայի գլխից տանկերի մասին մտքերը դուրս չեյին գալիս:

Վերջապես Իվանի ցանկությունը կատարվեց. նրան փոխադրեցին տանկային միավորումը:

Այստեղ Իվանին հիմնավորապես պետք չեկավ կոմբայնավարի՝ իր արվեստը, վոր գերազանցապես զուգորդվում էր իր հարցասեր խելքի և հազվագյուտ հաստատակամության հետ: Հիսուն օրից հետո Իվանը գրավեց մեխանիկ—տանկի ղեկավարի տեղը: Աշակերտից նա աննկատելի կերպով դարձավ ուսուցիչ, սկսեց ուսումնական ստորաբաժնում սովորեցնել առաջին տարվա աշակերտներին:

★

Կես տարուց հետո յեկավ նրա յեղբայր Դմիտրին (նա այնուամենայնիվ թույլտվություն ձեռք բերեց ՀԱՅՀԻ—կամավոր գնալու): Նրա հետ յեկան յերկու Միչուրինները—միևնույն մարտում Սեմյոնի հետ սպանվել էր նաև նրանց յեղբայրը՝ Գրիգորին:

Իվանը առաջարկեց կազմակերպել յեղբայրներ Լազոդաների—Միչուրինների տանկային անձնակազմ և մրցման հրավիրել Միխեյիվ չորս յեղբայրների տանկը: Նրանք յուրայիններ են—վուզարնակներ (յերկու կրտսեր Միխեյիվները Հեռավոր Արևելք են յեկել վորպես կամավորներ ի պատասխան Սեմյոնի մահվան): Իվանը գցեց մի կայծ, վորից շուտով մեծ բոց առաջացավ: Աչքի ընկնող այնարդյունքները, վոր մրցման մեջ ձեռք են բերում յեղբայրների տանկային անձնակազմերը, անփոփոխաբար ծառայում են վորպես դրոշ հեռավոր—արևելյան ամբողջ ճակատի համար: Տանկերը ղեկավարել և «հակառակորդին» հարվածել—ինչպես Լազոդաները, ինչպես Միխեյիվները,—այդ է բոլոր տանկիստների յերազը:

Իվանը պատմելու սիրահար չէ, բայց չկարողացավ չխոստովանել.

— Հիշում եմ, յերբ առաջին անգամ տանկը ձյան վրայով տարան: Մենք բոլորս հուզվում եյինք: Խնդիրը դժվար է: Ճանապարհին շատ խոչընդոտներ կան—ձորակներ, բարձունքներ, սառցապատ լեռնալանջեր: Հրամանատարը գովեց—նշանակում ե՝ գլուխ բերինք:

Հենց նույն օրը Միտյան և յերկու Միչուրինները ցույց տվին գնդացրից մարտական լիցքով կրակելու իրենց արվեստը: Ստացան գերազանց գնահատական: Շուտով սովորեցին գրավել ամեն մի բլուր: Մեզ համար տայգայում անանցանելի ճանապարհներ չկան: Ուր վոր պետք է անցնել, այնտեղ էլ ճանապարհ է: Գնդացրիների հետ, թնդանոթների հետ նույնպես մեծ բարեկամություն մեջ ենք գտնվում: Սեմյոնից վատ չենք կրակում: Իսկ նա հազվագյուտ սնայակեր էր: Վերջերս է սկսել Դմիտրին նշաններին խփել: Գերազանց գնահատական ստանալու համար աշտարակային հրաձիգը պետք է յերեք անգամ նշանին խփի: Դմիտրին նշանին խփեց ինն անգամ իրար հետևից:

Ինքը Իվանը հրամանատարությունից 12 չնորհակալություն ունի ստացած: Հեռավոր—արևելյան զորամասերում գոյություն ունի մի տրադիցիա—միավորման լավագույն մարտիկը լուսանկարվում է դրոշակի մոտ: Իվան Լազոդան այդ պատվին արժանացել է...

Այդ բոլորը հորից է: Նրա դպրոցը, նրա սովորեցրածը: Վորդիների աչքի առաջ միշտ կանգնած է յեղել Ֆյոդոր Աբրոսիմովիչի հերոսական կյանքը, մանկությունից սկսած նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր հոր նման լինել:

Ինչպես կեչին է, այնպես էլ ընձյուղներն են:

Կ

Ֆերկաթուղային ղեկուների և նորոգման արհեստանոցների բանվորական Ժողովներում, կոլտնտեսությունների դաշտային հավաքատեղերում, ՄՏԿ-ների և խորհրտնտեսությունների աղարակներում ավելի քան քառասուն հազար աշխատավորներ Ֆյոդոր Աբրոսիմովիչ Լազոդային ՌՍՖՍՀ Գե-

րազույն խորհրդի դեպուտատի թեկնածու առաջադրեցին: Հունիսի 26-ի անմիջապա ինքն ընտրողներն ամբողջ հարյուր տոկոսով իրենց ձայները նրան տվին:

Մեծ և ժողովրդական իմաստությունը:

Ֆյոդոր Լազոդայի ամբողջ կյանքն ասում է, վոր այդ ընտրությունը ճիշտ եր արված:

1915 թվի դեկտեմբերին մերձվորդյան բատրակ Ֆյոդոր Լազոդային զինվոր տարան: Յարական բանակի հաղթանակները նրան հիացմունք չեյին պատճառում, պարտությունները չեյին տխրեցնում: Նրա հոգու խորքում հույս եր թաղնված. ցարը սրտերազմը տանուլ կտա, այն ժամանակ նրան հախանորեն կվճռեն և աշխատավոր մարդիկ նեղ դրությունից դուրս կպրծնեն, ազատ շունչ կքաշեն:

Զորանոցի մուտքի մոտ Ֆյոդոր Աբրոսիմովիչը մյուս գյուղացիների հետ միասին դեցեց իր պատված շորերը, բայց իր հիշողության մեջ նա պահեց ամենը: Լազոդան հիշում եր, թե ինչպես Ուկրաինայում, Կիևի մոտ ինչ-վոր տեղում տառապանք կրեց հայրը և ինչպես սովը 19-րդ դարի վերջին նրանց քչեց Վոլգայի վրա: Անդրվորդյան տափաստաններում տաս տարեկան Ֆեդյան հոր հետ միասին արածացնում եր կարվածատիրական յերամակները և հոտերը: Յերեխան չափահաս մարդ դարձավ, բայց կյանքը կուշտ չդարձավ: Տարեցտարի հարկերը և տուգանքներն ավելի ու ավելի դերազանցում եյին աշխատավարձից, և վաղուց արդեն վերգրված եր գյուղացիական հասարակ կահ կարասիքը: Իսկ յերբ պատահում եր, վոր մահացու թչնամին—յերաշտը խանձում եր անդրվորդյան տափաստանները և վոչընչացնում հացը, ապա աղնիվ և աշխատասեր Լազոդայի ընտանիքին մնում եր մի բան—մուրացկանության գլխիկ, վոդորմություն խնդրել...

Բոլշևիկների այն կոչին, թե պետք է զենքը դարձնել ստրկացնողների դեմ, կովի գնալ հանուն ազատության, Լազոդան առաջիններից մեկն եր, վոր արձագանքեց: Շուտով նա ձեռք բերեց որամիտ մարտիկի համբավ, մարտիկի,

վորն ունի պայծառ միտք և հաստատուն ձեռք ու մեծ ատելություն դեպի թչնամին: Այն զորամասերը, վորտեղ գտնվում եր Լազոդան, հանձնարարել եյին պաշտպանել ռազմական մի մեծ գործարան, վորը Կարմիր Բանակին արկեր եր մատակարարում: Մոտերքը կատաղի կռիվներ եյին տեղի ունենում: Այն որը, յերբ Դուռտովի կապակային բանդաները, ճակատը ճեղքելով դեպի գործարանն եյին խուժում, շտաբում իրենց բունը հյուսած դավաճանները հրամայեցին ամբողջ պահպանությունը վերացնել գործարանից, կարմիր բանակայիններին ուղարկել ինչ-վոր թիկունք, հանգստի: Ամբողջ եյությամբ դժաց մարտիկ Լազոդան, վոր աշտեղ ինչ-վոր ստոր բան է կատարվում: Նա սկսեց համոզել ընկերներին՝ մնալ և վերջին ուժերով պաշտպանել գործարանը: Լազոդային ոգնության շտապեց բոլշևիկների տեղական կազմակերպությունը, և գործարանի պահպանության համար կամալորների ջոկատ ստեղծվեց: Թչնամու պլանը տապալվեց:

1919 թ. դարունն եր: Մարտիկ Ֆյոդոր Լազոդան ճակատից Անտոնովսկի կոչված ավանը յեկավ միառժամանակ մնալու համար: Գիշերը ավանի վրա հարձակվեցին կոլչակյանները: Կուլակ Ավրամենկոյի մատնությամբ սպիտակ գվարդիականները ձերբակալեցին Լազոդային: Նրան ծեծելուց հետո նրանք գերուն քչեցին շտաբ: Այնտեղ առանց ձգձգելու, նույնիսկ իրենց նեղություն չտալով դատի ինցենիլովկա սարքելու, դատավճիռ հանեցին—Լազոդային զնդախհարել:

Բայց վոչ, գեռես չուտ է հզոր կարմիր-բանակայինին բաժանվել կյանքից: Լազոդան փախչում է: Սպիտակների թիկունքում նա կապ է հաստատում կոլչակյան բանակի դասակարգների հետ, հավաքում է 30 հոգուց բաղկացած մի մարտական խումբ և նրանց հետ անցնում է դեպի Վոլգայի ստորին հոսանքը ու ավելի հեռու, դեպի Ուրալի: Այստեղ, ջարդուփշուր անելով սպիտակ կազակային զորամասերին, կովում են Կարմիր Բանակի զնդերը: Ֆյոդոր Աբրոսիմովիչը պատվավոր և վաճառավոր պոստում է—հետախուզության

մեջ: Նա թափանցում է հեռու՝ սպիտակ դորքերի խորքը, թափանցում է ամենազաղտնի տեղերը և կարմիր հեծեղազորի հրամանատարութեանը զինում է ամենաթանձազին տեղեկութուններով: Յերկու ընկերների հետ միասին, հենց նմանորինավ քաջերի հետ, Լազոդան հարձակում է դործում ատաման Սարաֆապիկին շտաբի կայանի վրա, գրավում է կարևոր փաստաթղթերը, զենքերը, զգեստները: Ինքն ատամանը, իր կաշին փրկելով, ժամանակ չունենալով վարտիքը վեր քաշելու, թռչում է լուսամուտից և փախչում յեղեգնուտի մեջ:

Հարագատ խորհրդային իշխանութեան համար ուստ ժողովրդի զավակ Ֆյոդոր Աբրոսիմովիչ Լազոդան կոչվում էր և՛ վոլգյան գյուղերում, և՛ Ղազախստանի առլններում, և՛ Բուխարայի զշլաղներում, նա կոչվում էր Կարմիր Բանակի շարքերում Դուռովի կազակային բանդաների դեմ, Կոլչակի հրոսակախմբերի դեմ, բասմաչների խաթաժուժի դեմ:

Իսկ 1928 թվին Լազոդան վերջին մարտը հայտարարեց իրենց գյուղի կուլակներին, հենց նրանց, վորոնք նրան կոլչակայինների ձեռքը մատնեցին 1919 թվին: Այն ժամանակ Լազոդան Պոլոթյեյում առաջիններից մեկը յեղավ, վոր կազմակերպեց կոլտնտեսութուն—վորպես որինակ ամբողջ ոկրուդի գյուղացիներին:

Մեծացան վորդիններ: Սեմյոնը դարձավ Իսակիի ՄՏԿ տրակտորային ջոկատի բրիգադիր: Իվանը կոմբայնը տալով հացառատ դաշտը: Վորդինների հետ ՄՏԿ-ի ազարակը տեղափոխեց նաև հայրը: Այդ այն անմոռանալի որերին էր, յերբ Դոնի հանքավոր Ստախանովը սկիզբ դրեց համաժողովրդական նոր շարժման: Փականադործ Ֆյոդոր Աբրոսիմովիչ Լազոդան չհապաղեց տալու և իր ձայնը: Նրա վոսկի ձեռքերը խիզախորեն խորտակում էին ամեն հնացած բան, մաքրում—սրբում էին բոլոր խոչընդոտները: Քանի՜ քանի՜ անգամ վնասարարները և քաղաքականապես տխմարները հարձակվել են նորարար—փականադործի վրա: Շատ բան է տեսել Լազոդան, բայց նա այնպիսի մարդ չէ, վոր նա

հանջի անհաջողութունների առաջից, ու առավել ևս՝ սպառնալիքների առաջից: Իր անսահման հայրենասիրութունը, դեպի Լենինի—Ստալինի դործն ունեցած խոր հավատն ուժ էր ներշնչում 50-ամյա Ֆյոդոր Աբրոսիմովիչին: Այդ հատկութեան համար և մեկ էլ հազվադուս համեստութեան և աշխատասիրութեան համար խիստ հարգում, սիրում է Պոլոթյեն իր Լազոդային, հավատում է, վոր ժողովրդի դեպոտատը կլինի նույնպես կայուն և ուժեղ այն պատվավոր դործում, ինչպիսին վոր նրանք հանձնարարել են նրան:

## VI

Հունիսյան մի լավ որ է: Մերձվորդյան Պոլովխտենվո կայարանի մոտի հրապարակը լեվ-լեցուն է մարդկանցով: Բոպե առ բոպե սպասվում է Ֆյոդոր Աբրոսիմովիչ Լազոդայի, ՌՍՖՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատի թեկնածուի, ժամանումը: Կոլտնտեսութունից կոլտնտեսութուն, մեքենատրակտորային մի կայանից մյուսն է անցնում փականադործ Լազոդան: Նա ծանոթանում է իր ընտրողների հետ, հետաքրքրվում է նրանց աշխատանքով, խորհուրդ է տալիս, սովորեցնում, ոգնում է: Պոլովխտենվոյի միտինգին նա մի քիչ ուշանում է—հետ էր ընկել մեքենա—տրակտորային նորոգման արհեստանոցում, ցույց էր տալիս, թե ինչպես պետք է սրել մանրամասնիկները:

Պոլովխտենվո կայարանի կառամատուցիչի մոտ հենց նույն օրը միքանի վայրկյանով ուշացավ հեռավոր—արևելյան գնացքը: Պլատֆորմ իջան յերկու հաղթանգամ գինվորականներ, վորոնք գլխներին դրած ունեյին հիանալի սաղին պիրտականեր, նախանձելի կեցվածք ունեյին նրանք: Վոչինչ չկասկածելով, նրանք դուրս յեկան հրապարակ: Նրանց ճանաչեցին: Լավեցին ձայներ:

— Լազոդայի վորդիններն այստեղ են: Խնդրում ենք հանդես գալ: Թող պատմեն, թե ինչպես էր նրանց գաստիարակում հայրը:

Հարյուրավոր ձայներ ձայնակցեցին այդ խնդիր—պահանջին: Իվանը ամբոն բարձրացավ:

— Այստեղ մի ընկեր հարցնում էր, թե ինչպես է մեզ դաստիարակել մեր հայրը, թե ինչպես մենք դարձանք խորհրդային հայրենասերներ: Մեր հայրը վերադարձավ քաղաքացիական պատերազմից այն ժամանակ, յերբ մենք, տղաներս, դեռևս փոքր յերեխաներ եյինք: Գիշերները, սեղանի շուրջը նստած, հայրս պատմում էր մեզ թշնամիների դեմ կատարած իր արշավանքների մասին, այն մասին, թե ինչպես իր ընկերների հետ միասին նա կռվել է աշխատավորութան յերջանկության ու աղատության համար: Դեռևս մանկության ժամանակ մենք վորոշեցինք պաշտպանել մեր Հանրապետության սահմանները: Մեմյոնը, հիշում եմ, ասաց հորս. «Դու, հայրիկ, բանակից վերադարձար կարմիր-բանակային դարձած, իսկ յես, կտեսնես, կվերադառնամ լեյտենանտ դարձած»: «Բարի»,—պատասխանեց հայրը...

Կայարանային արդելագծի մոտ Ֆյոդոր Աբրոսիմովիչը կանգնեցրեց ավտոմոբիլը և շտապեց ուղղակի դեպի հրապարակը: Իվանի վերջին խոսքերը հասան նրա ականջին: Ինչքան ծանոթ է ձայնը: Վո՛չ, չի կարող պատահել... վո՞րտեղից յեկավ նա: Յեվ այնուամենայնիվ Լազոդան արագրեց քայլերը: Ծառն ավելի ու ավելի պարզ էր լսվում: Ահա և դեմքը կարելի յե տեսնել: Այո, այդ նա յե, իր վորդին, իր Իվանը, վորի հետ հայրը բաժանվել էր տարի ու կես առաջ: Ամբիոնի աստիճանների վրա Ֆյոդոր Աբրոսիմովիչը համբուրեց Դմիտրիին: Իվանը վերջացրեց իր յեղույթը, շուռ յեկավ և նույնպես գրկախառնվեց հոր հետ...

Մինտինգից հետո ամեն ինչ պարզվեց: Յերկու շաբաթ առաջ տղաները հորը գրել էյին, վոր գնում են լեյտենանտների դպրոցը, ճանապարհին կանցնեն տուն: Բայց Ֆյոդոր Աբրոսիմովիչին այդ նամակը իսակլիում չէր հասել—նա չըջում էր իր ընտրական ուղևորում: Յեվ ահա հանգամանքների այդպիսի դուզադիպումն էլ հենց առաջ բերեց այդքան անսպասելի հանդիպում...

Մեծ է խորհրդային Ժողովրդի հայրենասիրությունը: Ինչպես Սեմյոն Լազոդայի հերոսական մահվանը արձագանգեցին հայրերավոր յերիտասարդ հայրենասերներ, այնպես էլ չափն անցկացրած սամուրայների ամեն մի արտելքին մեր Ժողովուրդը պատասխանում է խիզախության ու հերոսության նոր վերելքով:

Յեղբոր հետևից գնում է յեղբայրը, քույրը, վորդու հետևից—մայրը, հայրը: Ամբողջ բազմամիլիոն խորհրդային Ժողովուրդը պատրաստ է կանգնելու հարազատ Կարմիր Բանակի շարքերում, վորպեսզի կրճքով պաշտպանի իր սրբազան սահմանները, իր նվաճումները:

Այդպես յեղավ և Սասան լճի մոտ տեղի ունեցած մարտերի անմոռանալի ուրերին:

Պոսյետի զինվորական հիվանդանոցն է: Հենց նոր ժամանեցին վիրավորվածները, Զառդերնայա բարձունքի հերոսական գլուխի մասնակիցները: Յերկու սանիտարներ պալատ բերին վիրավորված լեյտենանտ Միխայիլ Պոտապովին: Հրամանատարի գլխին կռացավ խալաթի թևի վրա կարմիր խաչ ունեցող մի աղջիկ:

Ծանոթ, հարազատ դեմք: Ակամայից աղջիկը հետ թեքվեց:

— Միշա, յեղբայրս, ի՞նչ է պատահել քեզ:

— Այնվտինա, քույրիկս, ի՞նչպես ընկար դու այստեղ:

— Մենք կոմսոմոլի ամբողջ ռայկոմով ճակատ ենք յեկել: Վոմանք հիվանդանոցներում են աշխատում, մյուսները սկավառակ են պատրաստում, գնդացրային ժապավեններ են լցնում:

Այնվտինան սկսեց յեղբոր վերքը կապել:

— Քո ջերմությունը 39<sup>0</sup> է: Ի՞նչ հաղորդեմ մայրիկին:

— Գրիր՝ չնչին վերք է: Պատրաստվում եմ, իբր, գնալու նրա մոտ, պիրոզ ուտելու...

Միքանի ուրից հետո լեյտենանտ Պոտապովին պետք էր

տանել վլադիմիրովնոյ՝ ծանր վերահատման: Ծոգենալը հետ  
ընկավ. ինչ-վոր մի ծովածոցում մի քիչ ուշացավ: Պատ-  
գարակների մեջ դրված վերավորներն սպասում էին ափին:  
Ծովի մոտ այնքան էլ չող չեք, մարդավելի հեշտ եր չնշում:

— Բարև, Միշիկ!—Պոտապովը լսեց քնքուշ, հարազատ  
մի ձայն: Նրա գլխավերևում կանգնած եր մայրը, 67 տարե-  
կան մի սլառավ կին:

— Մայրիկ, դու ե՛լ ես այստեղ...

— Հապա ինչպե՛ս, Միշիկ, յես մարտիկների համար  
ճաշ եմ յեփում...

Կոխիների առաջին դժի վրա սանիտարները գետնից  
բարձրացրին մի ծանր վերավորի: Նրան շտապով տարան  
դումարտակի բուժակայանը: Այստեղ, ըստ յերևութին, լավ  
են ճանաչում վիրավորին: Բժիշկը կեղծ խտուրթյամբ ասաց.

— Հը՛, վերադարձա՞ր, փախստական:

Ահա թե ինչ տեղի ունեցավ: Հենց այդ բուժակայանի  
ատամնաբույժ Բեգոուլեվը շարունակ ձանձրանում եր. դեհ,  
ով այսպիսի ժամանակ ատամներ կրուժի,—ավելի լավ է  
յես ինքս մարտի գնամ և սամուրայների ատամները քաշեմ:  
Թողնենք ավելորդ մանրամասնությունները: Կասեմ միայն,  
վոր ատամնաբույժ Բեգոուլեվը առաջիններից մեկն եր,  
վոր ներխուժեց յապոնական դիրքերը: Նա վարպետորեն  
յապոնացիների վրա նետեց նռնակներ, հարվածեց հրացա-  
նի դիպուկ կրակով, ժամանակ դտավ կապելու մարտա-  
կան ընկերների վերքերը: Յապոնական նռնակը քիչ եր  
մնում կարեր այդ յերևելի խորհրդային ինտելիգենտի՝ ջերմ  
հայրենասերի կյանքի թելը: Բարեբախտաբար, վիրաբույժ-  
ները հաղթեցին մահը:

Շարունակությունը դուք գիտեք, բնթերցող: Յերախտա-  
գետ հայրենիքը իր քաջարի զավակին տվեց ամենաբարձր  
պարգևը: Բորիս Պետրովիչ Բեգոուլեվը արժանացավ Խոր-  
հրդային Միության Հերոսի կոչմանը:

Յանչիխեյի հովտում, մերձսահմանային բլուրների մոտ  
գտնվում է «20-летие Октября» կոլտնտեսությունը: Ծիշա

նրա կողքին—Խասան լիճը: Պարզորոշ լավում է կովի աղ-  
մուկը Չաոգերնայա բարձունքից: Ականջներ ե խլացնում  
մոտորների զղրղյունը: Այդ նորից տանկերն են, վորոնք  
սամուրայներին մահացու սարսափ պատճառելով, նրանց  
խուճապային փախուստի մատնելով, սրնթաց դրոհի անցան:  
Վայրկենարար ողում սլանում են «բազելիկները»—արագա-  
թուիչ կործանիչները, ուժակոծիչները:

Կոլտնտեսության վարչության շենքի մոտ ահագին  
թվով մարդիկ են հավաքվել, աշխուժություն ե տիրում:  
Կանգնած են յերկու ապրանքատար մեքենաներ, վորոնց  
կողքերին լայն ու հպարտ մակադրված է՝ «Колхоз  
имени 20-летия Октября»: Ապրանքատար մեքենաները  
լեկ-լեցուն են պոմիդորով, նոր կարտոֆիլով, կաղամբի  
գլուխներով, կաթով լիքը բիդոններով: Կոլտնտեսականների  
ընդհանուր ժողովը վորոշել եր՝ ամեն ուր արտելի առատ  
պաշարներից թարմ բանջարեղեն, կաթ, մեղր ուղարկել  
գիրքերը՝ մարտիկներին: Այստեղ մեծ վեճ ծագեց կոլտնտե-  
սության ներկայացուցիչների և զորամասի հրամանատարու-  
թյան միջև: Կոլտնտեսականները կտրականապես հրաժար-  
վեցին ուղարկված մթերքների գիմաց փող ընդունել:

— Ինչպե՛ս կարելի յե, դուք մեղ վիրավորում եք, ախր  
այդ մեր նվերն ե:

Ասենք, Խասանի կովիների սկզբից այդ արդեն յերկրորդ  
վեճն եր Յանչիխեյի հովտի կոլտնտեսականների և նրանց  
վաղեմի բարեկամների—Կարմիր Բանակի հրամանատարների  
միջև: Կոլտնտեսականներն իրենց ժողովում միարևման  
ասում էին.

— Մենք յապոնացիներին հին պարտք ունենք վճարելու  
դեռ 1922 թվից, ինտելիկենցիայի ժամանակից: Այժմ հա-  
տուցելու ամենահարմար դեպքն ե: Գնա՛նք ճակատ:

Հրամանատարությունն ստիպված եր յերկար ժամանակ  
համոզել բարեկամ կոլտնտեսականներին, վորպեսզի նրանք  
իրենց տեղերում մնան:

— Դուք կոմբայնները բերքահավաքի տարեք, կառուցեք

նոր տներ ու գոմեր, խնչպես վոր պատրաստվում էյիք  
կառուցելու: Սոսանց ձեզ ել մեր հողի նկատմամբ վրտնձգու-  
թյուն անող յապոնացիների համար մահը պատրաստ է:

Այն որերին մրցություն սկսվեց N ... զորամասի տան-  
կիտներին ու կոտնտեսական կոմբայնավարների միջև ...

### VIII

Մոսկվայի մոտի գյուղերում յերեկոները պատմում են  
Ժողովրդական հրաչալի մի հեքիաթ. նա կոչվում է՝ «Յերեք  
վորդիններ»:

Կարմիր Բանակից տուն վերադարձան ծերուկ հոր մոտ՝  
նրա վորդինները—ծովայինը և ողաչուն: Յերեքը վորդին՝  
Յեգորը հեռավոր—արևելյան սահմանում սպանվեց յապո-  
նական զնդակով: Յեգորայինները զնացին ուղեկալը, Ուսու-  
րիի տայդայում կենսատու ջուր գտան և Յեգորին հարու-  
թյուն տվին: Յերեքն ել միասին մնացին սահմանի վրա  
ծառայելու: Յերեք յապոնացիները պոստում տեսան կենդա-  
նացած մարտիկին, նրանք ձայն տվին.

— Հե՛յ, Յեգոր: Այդ դու՞ յես:

— Յես ինքս եմ:

— Ձե՞ վոր մենք քեզ սպանեցինք...—զարմացան թըշ-  
նամիները:

Իսկ Յեգորը պատասխանեց.

— Դուք մեզ ինչքա՞ն ել վոր սպանեք, մենք նորից  
կկենդանանանք:

Իսկապես, մի՞թե Իվան և Դմիտրի Լագոդայի մեջ չի  
կենդանանում նրանց Սեմյոն յեղրոր պայծառ պատկերը:

Մի՞թե խորհրդային հայրենասիրության բաղձաթիվ  
արտահայտությունների մեջ չի ապրում Ժողովրդական զոհ-  
ված հերոսների անմահ պատկերը, վորոնք իրենց կյանքը  
տվին հայրենիքի համար, Լենինի—Ստալինի կուսակցության  
մեծ զործի համար:



ФРБ: 50 ч.

11295

Д. ИЛЬИН

ПОГРАНИЧНИК ЛАГОДА

(семья патриотов)

Аригиз—Издательство полиг. литературы  
Ереван, 1939